



**ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԿՈՆԴԱԿՐ  
ԱՐԵՎԵԼԵՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

ԱՄԵՆԱԲԱՐԵՊԱՇՏ ՊԱՏՈՒԵԼԻ ԵՐԱՄՈՅ ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐԶԻՆ ՀԱՅՈՅ ՀՈ-  
ԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ԵՒ ՄԱՐՄԵԱՒՈՐԱԿԱՆԱՅ ԲՆԱԿԵՑԵԼՈՅ (տեղաճուճք բաց է  
թողնված), ՍՐԲԱԳՈՐԾ ՔԱՀԱՆԱՅԻՑ՝ ԱՒԱԳԱՅ ԵՒ ԵՂԵԼՈՅ ՅԻՒՐԱՔԱՆԶԻԻՐ  
ԿԱՐԳԻ, ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻՒ ԱԶԳԱՍԷՐ ԻՇԽԱՆԱՅ՝ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԱՅ ՀԱՍԱՐԱ-  
ԿՈՒԹԵԱՆ, ԵՒ ՎԵՐԱՏԵՍՉԱՅ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՅ, ԵՐԵՑՓՈԽԱՆԱՅ ԵՒ ԳԱՆ-  
ՉԱՊԵՏԱՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՅ, ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ,  
ՄԵԾԱՅ ԵՒ ՓՈՔՈՒՆՅ, ՈՂՋՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԻ ՆՈՒՐԵՄ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ  
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ յայց ել մեզ և արար զփրկութիւն ժո-  
ղովորդեան իւրոյ՝ երգեաց ի ծննդեանն Սրբոյն Յովհաննու քահանայն Զա-  
քարիաս: Զնոյն այժմ երգակցեալ նմին, աւետարանեմ ձեզ՝ զմեծամեծացն  
Աստուծոյ ի հասեալ ժամանակի յայժմիկ վասն անձառ մարդասիրութեամբ  
փրկութեանցն նորա Հայրենեաց Հայաստանի Արարատեան աշխարհի և բազ-  
մութեան Հայկազանց՝ տառապելոց ընդ ամենայն սահմանս Ատրպատակա-  
նի՝ հզօր զօրութեամբ և բարձր բազկաւ Օծելոյն իւրոյ Ինքնակալի Ամենայն  
Ռուաց և Մեծ Տիեզերակալի Թագաւոր Կայսր Նիկօլայի Առաջնոյ:

Կուեալ իցէք թերևս կանխաւ յառաջ, զի յամի 1826, յամեանն յուլիսի,  
յանկարծակի անկեալ զօրաց պարսից ի վերայ բնակչաց մերձակայ սահմա-  
նաց ռուաց ի գաւառն Շիրակայ, յԱրցախայ, որ է Ղարապաղայ, Շազուայ և  
Շամախոյ, կոտորեցին, գերեցին ուր և կարացին զբազումս ի Հայոց և յա-  
ւետարանական ժողովրդոց, այն է նեմէցաց՝ ամօք յառաջ վերաբնակելոց յՈւ-  
րոպիոյ ի սահմանաց Վէրտէմբուրխայ՝ ի սահմանս Վրաստանու տեղակալի-  
ոց ի մասին Հայաստանի Սոմխեթիա կոչեցելոյ:

Արշաւանք յիրաւի զարհուրագին յոյժ ո՛չ յաղագս ահեղ զինուորութեանց  
նոցին, այլ յաղագս բազմաթիւ յարձակմանց նոցին ի ժամու բարեկամութեան և  
ի ժամանակի անպատրաստութեան քաջազէն զինուորութեան ռուաց և ամե-  
նայն հասարակութեան հաւատարիմ հպատակաց բրիստոնէից Հայոց և Վրաց,  
յորժամ իսկոյն միարանեցան ընդ նոսա և ամենայն հասարակութիւնք, հպա-  
տակեալք մահմէտականաց բնակչաց՝ ի սահմանս ամենայն նշանակեալ գա-  
ւառաց:

Վասն հետեւեալ ապարախտութեան իրեանց յապալս զառաջինն, յայնժամ  
բարեբախտ եղեն պարսիկք, առանց դիմակալութեան հակառակորդաց ուրեք,  
տիրել հսկայապէս իմն ամենայն նախադրեալ տեղեացն, և տանջել, կեղծքել,  
մանաւանդ ի նուիսի զբազումս ի Հայոց, յորժամ նոցին զիմագրաւ մնաց  
միայն ի Ղարապաղ յամրոցն նորին ի զլուխս լերին Շուշի անուանեալ քաղաք,

յորում էին բազմութիւնք Հայոց և գունդ փոքրիկ սահմանեալ զօրաց ուսաց: Իսկ բնակիչք ի մահմէտականաց՝ թէպէտ և իշխանաւորք և կարողագոյնք, այլ ո՛չ յայնքան բազմաւորք: Յոյր սակս մեծ բանակն պարսից, ընդ կառավարութեամբ ժառանգի տէրութեանն պարսից, զաւուրս քառասուն և ինն զբաղեալ ի պաշարման նորին: Մարթ է ասել, թէ ա՛յն եղև յայնմ ժամանակի աւազակաբար ասպատակութեան նոցին առիթ ազատութեան ապրեցելոցն յամենայն սահմանս Վրաստանու ի վերահասեալ վտանգէ նոցին, յորժամ կարողացեալ զօրաց ուսաց եղելոց ի տարակացութեան ի զանազան տեղիս իւրեանց հաւաքել ի մի, և հանդիսանալ ախոյեան հզօր յանդիման թշնամեաց ի սահմանս Ելիսավետօպօլոյ, այն է՝ Գանձակայ՝ ի Շամքօտ անուանեալ նահանգի, ընդ զօրապետութեամբ ղեներալ մայեօր Հայկազն քնեալ Մատթօն-վի, ուր և յաջողութեամբ Աստուծոյ պարտեալ սակաւաւորօք ղմեծ բազմութիւնն պարսից, կոտորեցին զբազումս, գերեցին զհարիւրաւորս, սպանին և ղմեծ զօրագլուխն նոցա զքեռի յիշեալ շահադաշին՝ ղԱմիրխան սարտար, և ի նմին իսկ ասուր տիրեալ Ելիսավետօպօլ քաղաքին և ամենայն սահմանաց նորա: Յետ ոչ բազում աւուրց, հասեալ անդ առ նոցա և ղեներալ լեյտենանտ Իւան Ֆէդրիչ Պասկևիչ միւս ոռա փոքրիկ զնդաւ զօրաց՝ այն ինչ մտադիր լինէր նա ղմեծ ի վերայ մեծ բանակի արքայորդոյն պարսից, որ պաշարեալ ունէր զամրոցն Շուշի: Ահա ինքն արքայորդին ի բաց լքեալ զպաշարումն, ղիմէ անհնարին ցասմամբ ի վերայ բանակին ոռաց՝ որ յմիզավետօպօլ, առնուլ զվրէժ հարուածոցն նոցա իւրոցն, այլ զի Տէր է որ յաջողէ զամենայն յամենայնի, անդ ևս հզօրացեալ արիւսպէս բարեբախտ զօրապետ ղեներալ լեյտենանտ ղեներալ ատիւտանդ Պասկևիչն օգնականութեամբ երկնից՝ զղիմի հարեալ բազմութեանն թշնամեաց իւրովքն սակաւաւորօք ցրուեալ հալածեաց զբռն բանակն պարսից, գերեալ զհազարաւորս ի հետևակաց նոցին, և սատակեալ զբազումս ի հետևակաց և ի հեծելոց, յորժամ ինքն արքայորդին սրավար արշաւանօք նժոյգ երիվարաց հազիւ ուրեմն փախստական անցեալ ընդ Երասխ ի սահման իւրեանց մազապուրծ զանձն ապրեցուցանէ յահղասաստ հրոյ և սրոյ յաղթողաց: Եւ եթէ գոյր պաշար բաւական, յայնժամ իսկ զհետ ընթացեալ նորա, զօրէր մտանել ի Գարեժ ի նմին իսկ ամենանն սեպտեմբերի բանակն ոռաց, այլ զի նորոգ կարօտէր ամենայն պատրաստութեանց պատերազմականաց վասն անակնկալ պատահմանցն այնպիսի պատերազմութեանց, որպէս առհաւատչեալ իմն յահարկութիւն թշնամեաց միայն անցեալ ընդ Երասխ, և անտի ևս փախստական արարեալ արքայորդին պարսից, և տիրեալ նահանգաց այնոցիկ՝ վերադարձաւ անդրէն վասն վերաժամանելոյ ձմերան:

Տէրութիւն ոռաց կարգաւորեալ զամենայն լընթացս ժամանակաց սաստկութեանս ձմերայնոյ, իսկ և իսկ ընդ քանիլ գարնան, յառաջ խաղացուցեալ զզօրսն իւր ի 6 ապրիլի, հասին նախընթաց զօրք նորին յԱթոռ Սուրբ Էջմիածնի ի 13 ապրիլի 1827 ամի, ընդ որս և մեք, թէպէտ ոչ զինակիր, այլ որպէս զինուորակից փրկական խմբի նոցին, աղօթիւք և հարազատութեամբ հոգւոյ: Յետ 15 ամաց պանդխտութեան մերոյ վիճակաւոր արքայիսկոպոսութեամբ ի սահմանս Վրաստանու, արժանի եղաք ո՛չ ընդ մերոց արժանաւորութեանց, այլ ըստ առատ մարզասիրութեանց Աստուծոյ, համբուրել զփափաքելին հոգւոյ մերոյ, և լինել ականատես սքանչելի ներգործութեանց այցելութեանց երկնից ի փրկութիւն մերոց Հայրենեաց և ամենասիրելի համազգեաց, որով և գտանիլ բարեբախտ, լինիլ աւետաւոր առ ձեզ և առ ամենայն ազգս Հայոց. «Մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալք»:

Քանզի ո՛վ ամենաբարեպաշտ արգոյք, որդիք Հայրենեաց Հայաստանի, անշօշափելի էր այս ամենայն նախատեսութեանց մարդկային մտաց, զի յետ տարտամ ընթացից պատերազմական գործոց ամսօրեայ ժամանակօք, այն իսկ արքայորդին պարսից Ապպաս Միրզայ, թողեալ զմեծ բանակն ռուսաց ի Նախիջևան գաւառի, ոչ անգոսնելի խոհական ընտրութեամբ, ստուար բանակաւ, եկեալ, գտեղի կալեալ մերձ ի Սուրբ Կաթողիկէ Էջմիածին ի տեղի ապահով ըստ ամենայն ամբակուռ դրութեանց, ի դաշտին Օշական գեղջ, և առաքեալ զգոնդա հետեակ զօրաց հանդերձ թնդանօթիւք ի 13 օգոստոսի, յաւուր տօնի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, սկիզբն արարին հարկանել թնդանօթիւք ո՛չ զկաթողիկէ եկեղեցոյն, այլ զպարիսպն ամրոցի նորին զատուա Է: Մինչև ի հինգերորդումն, որ օր տասն և երրորդ էր ամսոյն, փութացեալ յօգնութիւն բազում գովութեանց արժանաւոր քաջ դիմերալ լեյտենանտ Աֆանասի Իւանիչ Կոասովսկի 2.500 հետեակօք և 500 ձիաւորօք, երկոտասն թնդանօթիւք ի բանակէն՝ որ լԱպարան, առ ստորտոով լերինն Արայի: Զորմէ յուր առեալ թշնամեաց, ի մէջ գիշերի, թողեալ զպաշարումն, զանխուլ ընթանան միանան ընդ զօրս մեծ բանակի իւրեանց: Եւ ընդ լուսածագն առաւօտուն զգացեալ մեր վասն զայտեան օգնական զօրաց և գոլով ծանօթ մեծութեան բանակի թըշնամեաց և ամրութեանց տեղւոյն և անձկութեանց քարակարկառ ճանապարհացն ընդ որ անցանելոց էին զօրքն քրիստոսագօրք և ամենայն հնարադրութեամբ նախապատրաստ որոգայթիցն լարելոց շուրջ զճանապարհան, յուսացեալք յօգնականութիւն Տեառն Աստուծոյ, միաբան առ հասարակ, փութացաք ի սուրբ յեկեղեցին և մատուցեալ զքերմեռանդական աղօթս բազում արտասուօք, խնդրեցաք զօգնականութիւն յերկնից: Եւ յետ կատարման պաշտամանցն, ելեալ ի բարձունս տանեաց Սրբոյ Կաթողիկէին կայաք ի գնին: Եւ ահա ի գալ ժամանել բարձր փառաւորագոյն զօրաց ռուսաց ի տեղին, ուր յառաջ քան զ477 ամ, այն է յամի Տեառն 1351, Վահան Ամատունի հզօրացեալ Աստուծով, նիզակահար յերկիր կործանեալ զզօրադուխն հիախակահաց կապասակահաց, վանեաց զզօրութիւն նորին, անդէն, ի նօին տեղտօջ, երկրորդ անգամ այժմ արքայորդին պարսից զպատերազմն իւր սաստկացուցեալ յիններորդ ժամու, յառաջ քան զկէս օրն, ի լրման ութն ժամուց, ահեղ պատերազմութեամբ ընդարձակեալ զճանապարհ իւրեանց զբեթէ խորտակմամբ ամենայն զօրութեանց թշնամեաց հսկայօրէն յո՛յժ յո՛յժ, անցեալ ընդ ամենայն դժուարութիւնս քարակիրձ ճանապարհացն, եկին ժամանեցին ի Սուրբ Կաթողիկէն Էջմիածին աստուածագօր փունդն հզօրաց երկոտասն թնդանօթիւք իւրեանց:

Այս քաջութիւն նոցա սասանեցուցիչ էր թշնամեաց, այլ այնու ամենայնիւ առ դիպեցաւ և մեզ տրտմութիւն մեծ, այն, զի հետեալօրք ռուսաց ժամ 12 ճանապարհորդեալք ընդ անշուր անապատ և յանդիման արեգակնակէզ օրոց վճարեալ զպատերազմն ութն ժամուց, ընդ ժամանելն ի ջուր այգեստանեայց Կաթողիկէ Էջմիածնի, գունդն առաջին անցեալ յապահովի գայր ժամանէր լԱթոն, և գունդն վերջին ընդ նորին գերազանցութեան քաջամարտ դիմերալ Աֆանասի Իւանիչ Կոասովսկոյ կալեալ զառաջս թշնամեացն, գայր պատերազմաւ գունդն, որ ի միջի որպէս ի տեղի ապահովի բացակայ յառաջնոցն և ի վերջնոցն անկանի ի վերայ ջրոցն, գոլով յաղթահարեալ յուժգնութեանց ծարաւոյ, ուր ի վերայ հասեալ հեծելագօրաց թշնամեաց դարանակալաց մերձ առ նոսա, սրահար, նիզակահար սպանանեն զանկեալսն ի վերայ ջրոց զհարիւրաւորս քանիս, գերեվարեն և աւելի քան զերկերիւս, մինչև ցժամանել առ նոսա վերջին բանակին, որ հալածեալ զթշնամին, զապրեցուցեալսն ի սրոյ և

ի գերութեանց նոցին էած ընդ իւր ի Սուրբ Էջմիածին: Ուրախութիւն լինէր թշնամեաց, արգարեւ, տրտմութիւն մեր այս, եթէ հարուածք իւրոցն և դիակունք անկելոցն չլինէր հնգապատիկ առաւել: Զարհուրեալ արքայորդոյն փորձառութեամբ սակաւատրաց զինուորութեանց ռուսաց: Այն ինչ ղենեբալ Կոստանկի պատրաստէր զիւրսն ընդարձակ ճանապարհաւ անկանիլ ի վերայ բանակի նոցին կոշելով յիւր յօգնութիւն փոքրիկ գունդ այլ ի բանակէն: Այլ որ առեալ ունէր զչափ այսոցիկ պատերազմութեանց, ոչ ևս կարողացեալ ապաւինիլ յամրութիւն տեղոյ իւրումն բանակի, և ոչ ի զօրութիւն զինուց իւրոցն յազմատրաց: Յերոդոտոս աւուր խոյս տուեալ անտի ի յՕշականայ և անցեալ ընդ Հրազդան գետ, եմուտ ի խորածորս Մաղկունեաց նահանգի: Ուր զկնի աւուրց, առեալ զլուր վերադարձի գլխատր կառավարչի ամենայն զօրաց, նորին բարձր գերագանցութեան ղենեբալ լէյտենանտ ղենեբալ ատիւտանդ Պասկեիչի՝ ի խնդիր իւրումն բանակի: Յառաջ քան զմերձենալ նորին առ ինքն, երագեալ փախստական և անցեալ ընդ Երասխ, առ ստորտտով լերինն Արարատայ, ընդ դժուարընթաց ճանապարհս՝ շուեաց ի Խոյ քաղաք: Եւ գոգցես թէ ելիք մինչ ի սպառ զլոյս իւր ի վերայ իւրոցն ամենայն զօրութեանց, զի յետ այնորիկ ո՛չ ևս միւսանգամ կարողացաւ ընդառաջ ելանել սակաւուց կամ յազմութեանց զինուորութեանց ռուսաց:

Ղենեբալ ատիւտանդ Պասկեիչ ի 4 ամսեանն սեպտեմբերի ժամանեալ, զբանակ հարեալ յանդիման բերդին Երևանայ: Յաւուրն երկրորդի, խաղացոյց զբանակն ի Սուրբ Կաթողիկէ Էջմիածին, և ի 11 նորին ամսոյ, օգտակարագոյն խորհրդածութեամբ, յառաջացեալ դէպ յարեւմուտս Էջմիածնի, ի գաւառն Արշարունեաց, և բանակեալ մերձ յԵրասխ գետ, ուր էր ի կողմանէ հիւսիսոյ նորակառոյց ամրոցն անուանեալ Սարտարապատ և յարեւմտից կողմանէ՝ երեւելի գիւղն Հայոց յայն կոյս Երասխայ, անուանեալ Կողբ, յորում, իբրև յամրոցի իրիք, ժողովեալ պահէր Հիւսէյին զուլի խան սարտարն Երևանու զբնակիչս Աշտարակ, Օշական և Բարաքար անուանեալ գիւղօրէից Հայոց, և զշտեմարանս բաւական ցորենոյ և գարոյ: Ազդեցութեամբ իւրիք, թերևս նախախնամութեանց երկնից, զմտաւ ածեալ մեր, անդէն ի բանակին, և առաքեալ անդր զոմանս ի մերայնոց, հրաւիրեցաք զերեւելիսն ի Հայոց փութալ երագել առ մեզ ի բանակ անդր հեռաւոր յինքեանց իբրև շորից ժամուց ճանապարհաւ, որք և ըստ ազգական ամենաջերմեռանդ սիրոյ և հարազատութեան իւրեանց ժամանեալ առ մեզ իսկոյն ի շորրորդ պահու գիշերոյն, ընդարձակեցին մեզ ամենայն անձկութիւնն ցայն վայր, քանզի որ անծանօթ էր մեզ յառաջագոյն, նոքա յայտնեցին մեզ վասն շտեմարանացն ցորենոյ և գարոյ, որոց առաւել էր կարօտութիւն ահաւոր զօրաց յայնոսիկ աւուրս, յետ որոյ գտեալ զայն պաշար բաւական, հաստատեաց զմիտս իւր պաշարել նախ զայն ամրոց նորակերտ, տւր վայր Հասան խան եղբայր սարտարին քանի հաղարաւորօք բերդապահ զօրաց: Եւ յաւուր իննևտասներորդի ընդ երեկս, որ յուանալ ունէր օրն երեքշաբթի ի 20 սեպտեմբերի, զարհուրեալք ի կործանմանէ հարաւային պարսպաց ամրոցին ի հարուածոց մեծամեծ ուրաց՝ ասատնի անուանեալ պաշարող թնդանօթից, յուսացեալ ի պաշտպանութիւն դիշերային խաւարի, բացեալ զդուռն արեւելեան, աճապարեաց ի փախուտ ամենայն զօրօք իւրովք՝ սկզբնապատճառ կարծեցեալ այսոցիկ ուխտադրուծ պատերազմութեանց Հասան խան: Որում զհետ ընթացեալ հեծելազօրաց, զհարիւրաւորս քանիս կոտորեցին, ուր և գտին, և այնպէս բանակ զօրաց ռուսաց մտեալ յամրոցն տիրեաց խաղաղութեամբ՝ գտեալ ի նմին զլիութիւն առատութեանց ցորենոյ, գարոյ և զանազան հանգամանաց պատերազմականաց:

Յերրորդումն աւուր թողեալ անդէն զբերդապահս, երագեաց զլիւսուր կառավարին զօրաց մեծ բանական յԵրևան քաղաք, և պաշարեալ զանմատչելի կարծեցեալ մոլորեցուցիչն յուսոյ ամենայն աղիականաց զամբոցն նորին յարեւից հարաւոյ, կործանեաց նովին թնդանօթիւք և զպարիսպս նորին զարտաքինն և զնեքսինն ի միջոցի 6 աւուրց: Յորժամ ևս այն իսկ դարձեալ խուճապէր ի փախուստ, փախուցեալն ի Սարտարապատայ համբաւուք, սնտոեաց հոշակեալն, ի զօրապետութեան իւրում՝ անարին Հասան խան, յայնմ ևս վրիպեալ ի յուսոյ իւրմէ՝ ապստամբութեամբ ամենայն զօրաց և բնակչաց իւրոցն, հնազանդութեանց զարհուրելոց ի վերահասեալ համայնակորուստ վտանգէ յետ կործանմանցն պարսպաց, բացաւ ընդդէմ կամաց նորին դուռն ամբոցին:

Յետ որոյ, յուսացեալ նա ի հովանաւորութիւն նորակերտ ազօթարանի կառուցելոյ յեղբօրէ իւրմէ, անդէն, ի սենեկի միում նորին, պարտաւորեցաւ կալանաւորիլ ի սասանեցուցչէ ամենայն պարսկական զինուորութեանց ի ղեներալ Կոստովսկոյ ի 1 հոկտեմբերի, ուր ևս կարգաւորեալ զհարկաւորան իւրոց կառավարութեանց, մեծ զօրապետն Պասկեիչ կացուցեալ անդէն ի վառավարութեան զօրաց զղեներալ Կոստովսկի: Եւ ի կառավարութեան քաղաքական դործոց զնա, և զմեզ, և զկամենդատն բերդապահս պօլկովնիկ, դիմեաց ինքն ազատաբայլ այնուհետև անցանել ընդ Երասխ, գնալ ի Դաւրէժ, ուր յառաջ քան զժամանել նորա վաղադոյն ևս հասեալ յառաջընթաց զօրաց անարդել առանց իրիք հակառակութեանց թշնամեաց մտեալ ի քաղաքն, տիրեցին ամենայն խաղաղութեամբ: Յետ որոյ ի բաց եղեալ ժառանգն պարսից Տէրութեան Ապպաս Միրզայ զամենայն զյոյս զինուց իւրոց և այլոց հնարից, արկեալ զէնքն ի գիրկս գթութեանց և ներողութեանց ամենաողորմած Խնքնակալի կայսեր ամենայն ուուաց, դիմեաց իւրովի առ բարեբախտ կուսակալն նորին ղեներալ օտ ինֆանտերի ղեներալ ատիւղանտ զանազան նշանակիր Իւան Յէտրիչ Պասկեիչն, և գտեալ ընդ հաճոյս նորին զհնար պահպանութեանց աթոռոյ հօր իւրոյ, մատոցց նմա զվճար ծախուցն պատերազմականաց տասն քրօ ոսկոյ և արծաթոյ, որ կացուցանէ թողթն դրամ ուուաց ութսուն միլիոն ուուրի: Այլ որպէս ինձ թո՛ւի, առաւել քան զայն գտանի նմա զգալի այս բարեբախտութիւն Հայկազանց, զոր համաձայն մերոց խնդրանաց, ի գործ արկեալ յիշեալ մեծ զօրապետն բազում բարեբարութեամբ աղքատաց հասարակութեան Հայոց եղելոց ընդ իշխանութեամբ նոցին ըստ կարգի այլոցն հարկաւորաց դաշնակցութեան, պարտաւորեաց դաշնակցիլ և առ այն, զի Հայք կամ այլ քրիստոնեայք եղեալք ընդ իշխանութեամբ իւրեանց ևս և մահմէտականք գտանիցին ազատք ըստ իւրեանց կամաց մնալ ի տեղի իւրեանց ի ներքոյ պարսկական իշխանութեանց կամ չուել ամենայն կահիւք և կարասեօք իւրեանց ի սահման ուուաց:

Մեք առ սոյն ի մեր դիմաց առաքեալ քարոզ և հրաւիրակ ամենայն ժողովրդեան մերազանց զՍտեփանոս եպիսկոպոս Ենօքեան տփխիսեցի և զնիկողայոս վարդապետ զարաբաղցի, անդէն և ինքն մեր զօրապետն օն անդր խնամակալութեամբ կարգեալ ի դիմաց Տէրութեան հրաւիրակ և օժանդակ իւրոցն համազգեաց զյիշատակն օրհնութեանց հայրենասիրացն շուղայեցուց զկրտսեր որդի վեհազն աղայ Յովակիմայ Եղիազարեան զբարձր բարեճնունդ պօլկովնիկ ի գնդին գուարոտի վեհազնեայ աղայ Եղիազար Յովակիմեան Եղիազարեանց, յանձնեալ նմա գործակիցս եղբօր Յովսէփ կաթողիկոս կոչեցելոյ զմայեօր կնեազ Մովսէս Զաքարեան Արղութեանց, զմայեօր կնեազ Իւանէ Յովսէփեան Մելիքեանց, զկօլլիժսկի ասսէսօր, այն է՝ քաղաքական աստիճանի մայեօր Իսահակ Տէր Առաքելեան Զամազեանց, զԴաւիթ և զԱղեքսանդր

Ստեփանեան Ղօրղանեանց զինուորական աստիճանատրք, և զայլս ոմանս յաստիճանատրքաց Հայոց: Տուեալ նմա և ի պէտս հարկատրութեան աղքատաց ի գանձարանէ Տէրութեան թղթադրամ ասիղնացի անուանեալ հարկւր հազար ուրբլի դրամ, որ է 25 հազար մանէթ արծաթ: Ես ահա գոհանամ զԱստուծոյ, զի ընդոստուցեալ յամենայն թմրութեանց մտաց ամենասիրելի ազգն մեր Հայոց, գան ժողովին օր ըստ օրէ ի կողմանց կողմանց Ատրպատականի, ի սահման Երևանայ, Նախիջևանայ և Ղարաբաղու, յորոց այժմ ի սոյն կէտ դրութեանց ներկայ էին աստ առ մեզ անձինք առաջատրք հասարակութեանց վերաբնակեցելոց ի Դաւրիժոյ և ի Մարաղայէ, ևս և ի Խոյոյ աւելի քան 1.500 տանց և որպէս ընթեռնումք զգրութիւնս եպիսկոպոսաց, վարդապետաց և աստիճանատրքաց նշանակեցելոց մինչև ցելն մայիսի կամ յառաջագոյն ևս ամենայն բնակիչք Որմտոյ, Սալմաստայ և Խոյոյ սահմանաց, որպէս ահն ունիմք աւելի քան 10.000 տունք ի մեր ազանց, որդիք հարազատք Սուրբ Լուսատրչին, որք վերանորոգեսցեն զաւերական Հայրենեաց իրեանց, և զԱթոռ մեծ Քահանայապետութեան Ամենայն Հայոց և զբազմութիւն երեւելի երեւելի վանորէից, հիմնեցելոց ի Սրբոյ Լուսատրչէն և յայլոց երախտատրքաց ազգի Հայոց շնորհօք և մարդասիրութեամբ փրկողին զինքեանս Աստուծոյ և աստուածազօր Կայսեր ամենայն ոռւսաց:

Գոյ յոյս, և արդէն իսկ երեւին նշմարանք կերպարանելոյն այնպիսի յուսոյ, թէ զօրութիւնն երկնից որ օգնեաց քրիստոնէից ստորանկելոց բռնակալութեան պարսից, օգնեսցէ և քրիստոնէից ստորանկելոց բռնակալութեան օսմանցսց, եթէ ոչ տէրութիւն օսմանեանց մեղմեալ զբռնակալութիւն զհետ լինիցի յայսմհետէ իրաւանց և արդարութեանց թագաւորավայելուչ գթութեամբ և ողորմութեամբ:

Սրբազնագոյն կաթողիկոսն կայր տակաւին յեպիսկոպոսարանի մերում, ի Տփիսիս քաղաքի, և կամիմ փութալ անձամբ հրաւիրել զնա յԱթոռ Սրբութեան իւրոյ գէթ մինչև ց20 յունիսի:

Բազմութիւնք հոգևորականաց, եպիսկոպոսաց և վարդապետաց և ամենայն դասուց կղերիկոսաց արժանի գտեալ ցանկացեալ խաղաղութեանց, տրքնին ի շանս և ի վաստակս վերանորոգութեանց Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի Մայր Եկեղեցւոյ ամենայն Հայոց:

Կիապէս ևս պատմեսցէ վասն ամենայն ախորժականացն ձեզ հարազատ որդի Սուրբ Լուսատրչին ի ձէնջ բարերարեալ սիրելին իմ աղայ Մովսէս տրփխիսեցի, որում յանձնեցաք և զոմանս ծանօթութիւնս տպեալս ի տպարանի ուսումնարանի Հայոց ի Տփիսիս, համարելով զայնս հաճոյականս ձերումդ ամենաբարեպաշտ հոգոյ թարգմանեցեալս ի ոռւսաց լեզուէ ի հայ բարբառ: Եւ աղաչեմ զԱստուած, զի առաւել ևս յայսմհետէ արժանի արասցէ զմեզ գրել ձեզ հետ զհետէ զուրախականս և զսիրելիս ձեր զաւետարանութիւնս ազգական բարութեանց և յառաջադիմութեանց և ես կամ և մնամ միշտ իսկական վերապատուութեամբ և կատարելագոյն շերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ յաւերժ բարեացապարտ ձեզ և ի սրտէ բարեացակամ:

ՁԵՐՈՒՄ ԱՄԵՆԱԲԱՐԵՊԱՇՏ ԱՐԺԱՆԱՆՁՆՈՒԹԵԱՆՑ ԽՈՆԱՐԶ ԾԱՌԱՅ՝  
ՆԵՐՍԷՍ

ի 1828 ապրիլի 28,  
ի Սուրբ Կարաղիկէն էջմիածին

(Հայկական: ՍՍԹ Պետական մատենադարան,  
Արխիվային բաժին, Կարաղիկոսական դիվան,  
բզրապաւանակ № 58, վավերագիր № 133):